ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա հագեսցին» (Մատթ. Ե 6) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգիստ՝ նորոգ հանգուցյալ, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի հիշատակին:

*
* *

Դեկտեմբերի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 12-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Դեկտեմբերի 14-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Անանիա վրդ. Արաքաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Բազում մասամբք եւ օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք. Ի վախճան աւուրցս այսոցիկ խոսեցաւ ընդ մեզ Որդւովն զոր եդ ժառանգ ամենայնի, որով եւ զյաւիտեանսն արար» (Եբր. Ա 1—2) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է քառասունքի հոգեհանգիստ՝ հանգուցյալ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, արվեստաբան դոկտ. Սարգիս Մելիքսեթյանի հիշատակին:

Ս. պատարագից հետո Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է հանգուցյալի հարազատներին և մխիթարիչ խոսք ասում նրանց՝ կրած մեծ կորստի համար, ոգեկոչելով հանգուցյալի հիշա-

տակը և գործունեությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

*
* *

Դեկտեմբերի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 15-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում վերսկսվեցին 1980—1981 ուսումնական տարվա կիսամյա քննությունները, որոնք տևեցին մինչև սույն ամսի 30-ը: Ուրախությամբ պետք է արձանագրել, որ ուսանողները լավագույն կերպով պատրաստվել էին կիսամյա քննություններին, և դրանց արդյունքները ուրախացուցիչ են ու խանդավառ:

*
* *

Դեկտեմբերի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի» (Ղուկ. ԺԴ 11) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Զատիկ աբղ. Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ հանգամանալից կերպով տալով Մնասների առակի մեկնությունը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: